Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն ՀԽ-2 (9)

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին կից հասարակական խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) նիստի

2019 թ. սեպտեմբերի 6

Նախագահում էր ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար (այսուհետ՝ Նախարար), խորհրդի նախագահ Զարուհի Բաթոյանը (այսուհետ՝ Նախագահ)

Մասնակցում էին՝
Խորհրդի անդամներ

Ալլա Հարությունյան	«Առաքելություն Հայաստան» ԲՀԿ
Սուսաննա Թադևոսյան	«Հույսի կամուրջ» ՀԿ
Արաքսիա Սվաջյան	«Արև» երեխայի զարգացման հիմնադրամ
Մարիետա Թեմուրյան	«Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի» Վանաձորի գրասենյակ ՀԿ
Էդուարդ Կիրակոսյան	«Հայաստանի արդյունաբերնողների և գործարարների միություն գրասենյակ» ՀԿ
Միրա Անտոնյան	«Երեխաների պաշտպանության ցանց ոչ առևտրային» ԻԱՄ
Գոհար Խաչատրյան	«Հանրային քաղաքականության ինստիտուտ» ՀԿ
Անահիտ Գևորգյան	«Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» ՀԿ
Անահիտ Նահապետյան	«Արմավիրի զարգացման կենտրոն» ԲՀԿ
Դավիթ Ավանեսյան	«ՍՕՍ մանկական գյուղեր» ԲՀԿ
Աիդա Մուրադյան	«Վորլդ Վիժն ինթերնեյշնլ» ԲՀԿ
Աննա Եղիազարյան	«Հայկական կարմիր խաչ ընկերություն» ՀԿ

Գրիգորի Գրիգորյանց	«Սեյվ դը Չիլդրեն ինթերնեյշնլ» Հայաստանյան ներկայացուցչություն
Արթուր Գոմկցյան	«Օքսեջեն» երիտասարդության և կանանց իրավունքների պաշտպանության հիմնադրամ
Աննա Մնացականյան	Ֆիզիկական անձ

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից (այսուհետ՝ Նախարարություն)

Հրավիրված և մասնակցում էին՝

Գեմաֆին Գասպարյան	Նախարարի առաջին տեղակալ
Ժաննա Անդրեասյան	Նախարարի տեղակալ
Արայիկ Պետրոսյան	Նախարարի խորհրդական
Անահիտ Գևորգյան	Նախարարության հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի վարչության տարեցների հիմնահարցերի բաժնի պետ
Աստղիկ Մինասյան	Նախարարության սոցիալական աջակցության վարչության պետ
Ժորա Սարգսյան	Նախարարության աշխատանքի և զբաղվածության վարչության պետ
Անահիտ Մարտիրոսյան	Նախարարության միջազգային համագործակցության և զարգացման ծրագրերի վարչության պետ
Հայկ Մուրադյան	Նախարարության վերլուծության և մոնիթորինգի վարչության պետ
Արտակ Մարկոսյան	Նախարարության ժողովրդագրության բաժնի պետ
Անահիտ Քալանթարյան	Նախարարության ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչության երեխաների բաժնի պետ
Գայանե Մանուկյան	Նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի գլխավոր մասնագետ

Բացակայում էին՝

Խորհրդի անդամներ

Արտաշես Տոռոգյան	«Գործընկերություն և ուսուցում» ԳՈՒՄ/ՀԿ
Մարինե Համբարձումյան	«Հայ օգնության միություն» ԲՀԿ
Անահիտ Գևորգյան	«Հայկական կարիտաս» ԲՀԿ

Օրակարգի նախագծում ընդգրկված էին հետևյալ հարցերը.

1. Պարզաբանումներ և զեկույցներ խորհրդի անդամների կողմից առաջարկված հետևյալ հարցերի շուրջ.

- **Նախարարության կառուցվածքային փոփոխությունների նախագծերը և միասնական սոցիալական ծառայությունների գրասենյակ ստեղծելու խնդիրը,**
- **Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների հայտնաբերման և ուղղորդման կարգը (մասնավորապես նշվել է ծննդյան պետական գրանցում չունենալու դեպքը),**
- **«Երեխաների իրավունքների մասին» ՀՀ օրենքի լրամշակման գործընթացը,**
- **«Երեխաների քաղաք» ծրագրի վերաբերյալ նախարարության դիրքորոշումը և առաջարկները:**

(Զեկուցող՝ Նախարարի տեղակալ Ժաննա Անդրեասյան)

2. «Հոգեկան առողջության և մտավոր խնդիրներ ունեցող 18 տարին լրացած անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ տրամադրելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում:

(Զեկուցող՝ ԱՍՀՆ տարեցների հիմնահարցերի բաժնի պետ Անահիտ Գևորգյան)

3. Երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքի իրացման համալիր միջոցառումների ծրագիր

(Զեկուցող՝ ԱՍՀՆ երեխաների հիմնահարցերի բաժնի պետ Անահիտ Քալանթարյան)

4. Այլ հարցեր

Մինչ Խորհրդի նիստի օրակարգի հարցերին անդրադառնալը՝ Նախագահը ողջունել է Խորհրդի մասնակիցներին և անդրադարձել է նիստի օրակարգին, որի վերաբերյալ առաջարկություններ ու դիտողություններ չեն ներկայացվել և այն հաստատվել է միաձայն:

Օրակարգի առաջին հարցի շրջանակում՝ նախարարի տեղակալ **Ժաննա Անդրեասյանը** համառոտ տեղեկատվություն է ներկայացրել նախարարության կառուցվածքային փոփոխությունների նախագծի և միասնական սոցիալական ծառայությունների գրասենյակի ստեղծման գործընթացի վերաբերյալ: Նա նշել է, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) ներքին կառուցվածքը բազմաթիվ քննարկումների փուլ է անցել և ներկայումս գտնվում է լրամշակման վերջին փուլում: Այն ամբողջական նախարարության պատկերացումն է թե գործառութային, թե կառուցվածքի մակարդակում, որը ներառում է ոչ միայն նախարարության ամբողջական կառուցվածքի փոփոխության առաջարկը, այլ քաղաքականության իրականացման մակարդակում ինստիտուցիոնալ բաժանումը: Ելնելով տարբեր գործընկերների շրջանում տեղի ունեցած բազմաթիվ քննարկումներից՝ հաշվի են առնվել այն խնդիրները, որոնք բարձրաձայնվել են և ակնառու են եղել տարբեր հետազոտական ու վերլուծական հաշվետվություններում: Ամբողջ տեղեկատվությունը հավաքագրելով, ինչպես նաև հաշվի առնելով թե մարդկային ռեսուրսների, թե առկա խնդիրների համախմբությունը, առաջարկվել է մի կառուցվածք, որն ըստ էության հիմնված է նախարարության կենտրոնական ապարատի մակարդակում քաղաքականության մշակման ֆունկցիայի և քաղաքականության իրականացման գործառույթի վերապահմանը: Նախարության կողմից ներկայացված առաջարկների հիման վրա կառույցները պետք է լինեն երկուսը: Առաջինը Սոցիալական ապահովության ծառայությունն է, որն այս պահին գործող կառույց է և իր ֆունկցիոնալությունը կառուցվածքային փոփոխությունների ենթարկելով և բարելավելով որոշումների կայացման գործընթացը՝ շարունակելու է գործել: Երկրորդ կառույցը լինելու

է Միասնական սոցիալական ծառայությունների գրասենյակը, որը պետք է միավորի ներկայումս նախարարության ներքո գործող առանձին կառույցները՝ Զբաղվածության պետական գործակալությունը և Բժշկասոցիալական փորձաքննության գործակալությունը: Շրջանառության մեջ է դրված համապատասխան օրենսդրությունների փաթեթը, որով նախատեսվում է՝ սոցիալական աջակցության տարածքային մարմինների ենթակայության հարցը տեղափոխել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության իրավասության դաշտ: Այս գործառույթները ձևակերպվել են սոցիալական ծառայությունների միասնական գրասենյակի տրամաբանության ներքո, ինչը նշանակում է, որ ոչ թե պահպանվում են այս առանձին կառույցներից յուրաքանչյուրի գործառույթները և իրականացվում են մեկ կազմակերպական միջավայրում, այլ վերանայվելու են ամբողջական գործառույթները: <<Այսինքն, եթե մենք ունենք զբաղվածության գործակալության տարածքային մարմին առանձին կարիքների գնահատում զբաղվածության մասով, սոցիալական աջակցության տարածքային մարմնի մակարդակում սոցիալական կարիքի գնահատում, այստեղ խոսվում է նաև գործառութային վերանայման մասին: Երբ սոցիալական աշխատողը իրականացնում է ամբողջական կարիքի գնահատում և շահառուն ստիպված չի լինում դիմել հատուկ մի վայր, հատուկ դեպքը վարողին>>,- մանրամասնել է նախարարի տեղակալը:

Անդրադառնալով **Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների հայտնաբերման և ուղղորդման կարգի (մասնավորապես նշվել է ծննդյան պետական գրանցում չունենալու դեպքը) վերաբերյալ խնդրին՝** Ժ. Անդրեասյանը նշել է, որ ներկայումս գործում է 2015թ. սեպտեմբերի 25-ի 1112-Ն ՀՀ կառավարության որոշումը, որով սահմանվում է կյանքի դժվարին իրավիճակում հայտված երեխաների այլընտրանքային խնամքի տրամադրման նպատակով ուղղորդման կարգը և չափորոշիչները: Տարբեր հանդիպումների ընթացքում գործընկերների կողմից հնչած բազմաթիվ դիտարկումների և ոլորտային հետազոտությունների արդյունքում լրամշակվել է որոշումը և սեպտեմբեր ամսին դրվելու է շրջանառության մեջ: Այնուամենայնիվ, առկա են խնդիրներ, որոնք կառավարության որոշման մակարդակում կարգավորելի չեն: Խոսքը վերաբերում է գործառութային բաշխվածությանը, որի

տեսանկյունից նախատեսվում է ՀՀ կառավարության որոշման այս փոփոխությամբ կարգավորել այն հարցերը, որոնք ներկայումս հնարավոր է բարելավել: Միաժամանակ, նախատեսվում է առավել սկզբունքային հարցերին լուծում տալու համար իրականացնել փոփոխություններ, որոնք կապված են երեխաների իրավունքների պաշտպանության համակարգի արդյունավետության և գործող եռաստիճան համակարգի հետ: Թվարկված գործառույթները ընդգրկված են նաև ՀՀ կառավարության միջոցառումների հնգամյա ծրագրում, որը հաստատվել է ՀՀ կառավարության կողմից ս.թ. մայիսի 16-ին: Ծրագրի շրջանակում իրականացվելու է օրենսդրության ամբողջական վերանայում, լրամշակման փուլում է Ընտանեկան օրենսգիրքը, որը նախատեսվում է քննարկել որդեգրման գործընթացի բարեփոխման նպատակով ստեղծված աշխատանքային խմբի շրջանակում:

Անդրադառնալով **«Երեխաների իրավունքների մասին» ՀՀ օրենքի լրամշակման գործընթացին**՝ նախարարի տեղակալը նշել է, որ այն 2020թ. փետրվարի առաջին տասնօրյակին ներկայացվելու է ՀՀ կառավարություն: Միաժամանակ նախատեսվում է օրենքի նախագծի շուրջ կազմակերպել հանրային քննարկումներ:

«Հայկական կարիտաս» ՀԿ-ի կողմից ներկայացված **«Երեխաների քաղաք» ծրագրի վերաբերյալ** նախարարի տեղակալը ներկայացրել է նախարարության դիրքորոշումն ու առաջարկները:

Նա նշել է, որ նախարարությունը 4 առաջարկ է ներկայացրել այն մասին, թե ուր կարող են ուղղվել ֆինանսական միջոցները, որպեսզի իրականացվող ծրագրերը որևէ կերպ չհակասեն ներառմանը և հանրային զարգացման սկզբունքներին: Փոխնախարարը տեղեկացրել է, որ հանդիպումներ է ունեցել ԿԳՍՄ նախարարության գործընկերների հետ, որոնց ընթացքում քննարկվել են ներկայացված ծրագրի ռիսկերը: Ժաննա Անդրեասյանը հստակեցրել է, որ ներկայացված տարբերակով ծրագրի շրջանակում նախարարությունը համագործակցություն չի պատկերացնում:

Նա նաև նշել է, որ համագործակցությունը հնարավոր է լինելու միայն այնպիսի ծրագրի դեպքում, որը չի հակասելու նախարարության աշխատանքի սկզբունքներին, ներառականության քաղաքականությանը, ինչպես նաև միջազգային կոնվենցիաներին և երեխայի իրավունքներին:

Ներկայացված Ծրագրի վերաբերյալ Խորհրդի անդամների կողմից հնչել են տարբեր հարցադրումներ, մտահոգություններ և առաջարկություններ:

Օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ նախարարության տարեցների հիմնահարցերի բաժնի պետ Անահիտ Գևորգյանը խորհրդի անդամներին ներկայացրել է «**Հոգեկան առողջության և մտավոր խնդիրներ ունեցող 18 տարին լրացած անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ տրամադրելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը**: Նա նշել է, որ այն կարգավորելու է հոգեկան առողջության և մտավոր խնդիրներ ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայությունների տրամադրման ընթացակարգը, պահանջվող փաստաթղթերի ցանկը, շահառուի և կազմակերպության միջև եղած հարաբերությունները: Տնային պայմաններում խնամքի ծառայություններ են տրամադրվելու խնամքի կարիք ունեցող հոգեկան առողջության և մտավոր խնդիրներ ունեցող 18 տարին լրացած, միայնակ, օրենսդրութամբ սահմանված խնամող չունեցող անձին և խնամող ունեցող անձին՝ խնամողի աշխատելու պարագայում: Շահառուներին տրամադրվելու են սոցիալ-հոգեբանական, խորհրդատվական, սոցիալական կարողությունների և հմտությունների զարգացման, ինքնուրույն կենցաղավարման հմտությունների ուսուցման և այլ ծառայություններ, որոնք մատուցվելու են մրցակցային սկզբունքով հաղթած մասնագիտական կազմակերպությունները: Առաջարկվող օրենսդրական փոփոխության գաղափարը մարդասիրական է և համարժեք խնամքի ծառայությունների ապաինստիտուցիոնալացման գաղափարին՝ անձը չի հեռանում իր հարազատ միջավայրից և մնում է իր համայնքում ու տանը:

Օրակարգի 3-րդ հարցի՝ **Երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքի իրացման համալիր միջոցառումների ծրագրի շրջանակում՝** Անահիտ Քալանթարյանը խոսել է 2000-ականներից սկսված երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում իրականացված բարեփոխումների փուլերի մասին: Ներկաներին մանրամասնել է նախարարության համակարգում գործող հաստատությունների վերակազմակերպման, խնամատարության ինստիտուտի, որդեգրման գործընթացների արդյունքում ձեռք

բերած հաջողություններն ու բացթողումները: Ըստ նրա, ներկայացված ծրագիրը մշակվել է՝ հիմնվելով նախորդ տարիների փորձառության, գրանցված հաջողությունների և պրակտիկ աշխատանքում ի հայտ եկած խնդիրների ու բացթողումների վրա: Փաստաթղթում ներկայացվել է երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտի արդիականացմանն ուղղված 5 գերակայություն՝ Համալիր աջակցություններ երեխաների կենսաբանական ընտանիքներին, կենսաբանական ընտանիքում խնամքի անհնարինության պայմաններում ընտանեկան միջավայրում խնամքի ձևերի զարգացում ու ընդլայնում, ցերեկային ծառայությունների ծածկույթի համաչափ և ըստ գնահատված կարիքների ընդլայնում, ճգնաժամային աջակցության և ծառայությունների կենտրոնների հիմնում Երևան, Գյումրի և Կապան քաղաքներում, գործող շուրջօրյա և գիշերօթիկ խնամքի հաստատությունների ապաինստիտուցիոնալացում՝ ներառյալ ոչ պետական հաստատություններն ու մասնագիտացված խնամքի հաստատությունները:

Նա նշել է, որ ծրագրում ներկայացված գերակայությունները, նպատակներն ու ակնկալվող արդյունքներն ունեն իրապես մեկ նպատակ՝ երեխայի իրավունքի գործուն իրացման համար ստեղծել անհրաժեշտ միջավայր:

Օրակարգի երրորդ հարցի ներկայացումից հետո ևս Խորհրդի անդամների կողմից հնչել են տարբեր հարցադրումներ, մտահոգություններ և առաջարկություններ:

Ամփոփելով նիստի աշխատանքները՝ նախարարը նշել է, որ 2020 թվականից նախատեսվում է ընդլայնել նախարարության կողմից պատվիրակվող ծառայությունները, մրցույթները դարձնել հնարավորինս ճկուն, որպեսզի տարբեր կազմակերպություններ, տարբեր մարզերի համար դիմեն և իրականացնեն այն ծառայությունները, որոնց կարիքն ունի մարդը: Միաժամանակ Երևան, Գյումրի և Կապան քաղաքներում ստեղծվելու են ճգնաժամային կենտրոններ, որոնց գործունեությունը նպաստելու է մատուցվող ծառայությունների որակի բարելավմանը:

Անդրադառնալով գիշերօթիկ հաստատությունների լուծարման գործընթացին՝ նշել է, որ այն ոչ թե հաստատությունների բեռնաթափում է կամ լուծարում, այլ երեխայի ընտանիքում ապրելու իրավունքի ապահովում: Եվ հավելեց, որ այս շեշտադրությամբ

պետք է իրականացնել գործընթացները, քանի որ նախարարությունը խիստ կարևորում է ընտանիքների և երեխաների բարեկեցությունը: Եվ հարկավոր է օգտագործել բոլոր այն ռեսուրսները, որպեսզի երեխաները մեծանան ապահով ընտանիքներում: Միաժամանակ նախարարը ընդգծել է, որ Հայաստանում չպետք է լինի մեկուսացմանն ու առանձնացմանը նպաստող որևէ հաստատություն:

Նիստի ավարտին որոշում է կայացվել կազմել արձանագրություն և Խորհրդի անդամների հետ համաձայնեցնելով այն ներկայացնել ստորագրման:

9/20/2019

X

ԶԱՐՈՒՀԻ ԲԱԹՈՅԱՆ

Signed by: BATOYAN ZARUHI 7909790279

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Զ. ԲԱԹՈՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԵՑ՝ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆԸ